№ 55 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 23
1900
ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 23 № 55
ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

կարօտութեան հողի վրա.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաշարժից վնասվածների օգտին. Նամակ Պետերբուրգից. Նամակ Բաքուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աւա՜ղ, շատ ուշ է։

ԿԱՐՕՏՈՒԹԵԱՆ ՀՈՂԻ ՎՐԱ

Մեզ հաղորդում են գաւառներից, որ շատ տեղ հացը թանգացել է և գիւղական ազգաբնակութիւնը դժուարանում է սերմացու ձեռք բերել։ Այդ թանգութեան պատճառը սակայն հացի պաշարների բացակայութիւնը չէ վաճառանոցում։ Պաշար կայ, հացահատիկ կայ մասնաւոր մարդկանց պահեստներում. բայց նա չը կայ գիւղացիների շրջանում։ Պահանջը անհրաժեշտ է և անխուսափելի՝ դաշտերը սպասում են սերմացուի, գիւղական տունը կարօտ է հացի։ Ինչպէս էլ լինի՝ պէտք է գնել հացահատիկը, ինչ պայման էլ առաջարկելու լինի նրա վաճառողը։

Այդ դրութիւնը կրկնվում է ամեն տարի մեծ և փոքր չափով մեր երկրի այն մասերում, որտեղ կարօտութիւն կայ, և մերձակայ գիւղերում հացի աւելորդ պաշարները արդէն ծախված են։ Ձմեռվայ վերջին և գարնան ընթացքում, երբ հացի պակասութիւնը երևան է գալիս իր բոլոր ոյժով, գլուխ է բարձրացնում և վաշխառութիւնը, որը թանգացնում է հացի գինը և ամեն կերպ դժուարացնում նրա ձեռք բերելը։ Եւ այդ դրութիւնը շարունակվում է, մինչև որ տափարակներում սկսվում է հունձը, որից յետոյ վերջանում է մենավաճառութեան շրջանը։ Գիւղացին կարող է այդ ժամանակ հաց ձեռք բերել ուրիշ տեղերից և կախված չը լինել վաշխառուից։

Շատ դէպքերում վաշխառութիւնը պահպանվում է հէնց այն պատճառով, որ ստեղծվել են մենավաճառութեան համար աջող պայմաններ։ Արդարև աշնան և ձմեռվայ ընթացքում, երբ դեռ կան գիւղացիներ, որոնք հաց են վաճառում, հացի գները չեն կարող բարձրանալ։ Այդ ծախված հացը ամբարվում է հացավաճառի պահեստներում։ Իսկ գարնան, երբ ժողովուրդը արդէն կորցրել է գիւղական պաշարները, նա ստիպված է խոնարհվել անկարելիութեան, կարօտութեան առաջ և ընդունել այն, ինչ որ կարգադրում է վաշխառուի քմահաճութիւնը։

Այստեղ լուսաբանվում է վաշխառութեան ոյժի և զարգացման գաղտնիքներից մէկը։ Այնտեղ, ուր ժողովուրդը զրկված է միջոցից մաքառելու մենավաճառութեան դէմ, չունի տեղական պաշարներ կամ բաւականաչափ ոյժ հաց ձեռք բերելու հեռու տեղերից, կամայ-ակամայ ստիպված է ընկնել փող և մթերք ունեցողների ձեռքը։ Մինչդեռ երբ ժողովուրդը փոքր ի շատէ ապահովված է, կարիքների գերի և ստրուկ չէ դարձել, իր արդիւնքները ծախելու համար սպասելու ժամանակ ունի և ստիպված չէ ամեն տեսակ անձեռնտու պայմաններին համաձայնվելու, այն ժամանակ նա ընդունակ է մաքառել վաշխառութեան դէմ և թոյլ չէ տալիս, որ վերջինս քանդի և քայքայի նրա վիճակը։

Սա մի նոր ապացոյց է այն բանի, որ ժողովրդի ընդհանուր բարեկեցութիւնը ոչ միայն լաւ է ինքն ըստ ինքեան, այլ և նա մեծապէս նպաստում է մաքառելու զանազան ձախորդ և վնասակար ազդեցութիւնների դէմ, որոնցից զգալի և երբեմն անդառնալի կերպով վնասվում է այն ժողովուրդը, որ նախօրօք տնտեսապէս թուլացել է և կարօտութեան ցանցի մէջ ընկել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Արդիւնագործական եւ առեւտրական տուզերը, ինչպէս յայտնի է, չեն բաւականանում ոսկի դիզողների անձնական փառքով, այլ եւ համարում են իրանց հայրենիքի, նոյն իսկ ամբողջ մարդկութեան բարերարներ. եւ որպէս զի այդ բարերարութիւնը բաւական չափերով մեծ լինի, նրանք պահանջում են, որ իրանց քմահաճութիւնների, իրանց ահագին պահանջների համար ամենալայն ասպարէզներ բացվեն։ Տուէք այդ «բարերարներին» շատ արտօնութիւններ, նրանց տրամադրութեան տակ դրէք գործելու, այսինքն խլելու-գափելու բազմակողմանի օրինական միջոցներ, որպէս զի նրանք կարողանան երջանկացնել այս հողեղէն աշխարհը։ Հէնց միայն այն հանգամանքը, որ ներկայումս հազարաւոր մարդիկ կոտորվում են աֆրիկեան պատերազմում, բիւրաւոր մարդիկ անբախտանում են եւ երկու կողմերը հարիւրաւոր միլիօններ են ծախսում միմեանց լաւ, հիմնաւորապէս կոտորելու համար,—միայն այս հանգամանքը, ասում ենք, որ դրամական տուզերի պատճառով գոյութիւն ստացաւ մեր ժամանակներում, բաւական է ցոյց տալու համար, թէ որպիսի «բարերարներ» են հանդիսանում բորսաներին, առեւտրական հրապարակներին տիրած մի բուռն մարդիկ, մի քանի տասնեակ տոպրակներ, որոնց մէջ ոսկի է պահվում։ Բայց կապիտալիզմի ստրկացնող բարերարութիւնը միայն մաուզէրեան հրացանների եւ Կրուպի թնդանօթների բերանով չէ կանչում. նայեցէք ձեր չուրջը, եւ կը տեսնէք, որ ամեն քայլում նոյն բարերարութիւնը իր պողպատէ ճանկերն է խրել ձեր կազմուածքի մէջ։ Շաքարը, նաւթը, սպիտակեղէնը, մահուդը եւ այլ այսպիսի կենսական նիւթեր, նախ քան ձեզ մատչելի դառնալը, ձեզանից զոհեր են պահանջել եւ ստացել. նրանք արտադրողների համար մի չարք արտօնութիւններ են ստեղծել. ամենից առաջ մաքսային հարկերով հովանաւորված են, այսինքն արտասահմանեան մրցութիւնից չեն վախենում, եւ եթէ այդ էլ բաւական չէ համարվում ձեզ բարերարելու համար, տուզերը ժողովվում են միասին, խօսք մի են անում եւ ստանում են ձեզանից այն գինը, որ իրանց է հաճելի։ Մինչեւ այժմ լսում էինք նաւթագործների, շաքարագործների, մանուֆակտուրիստների մէջ եղած այդպիսի բարերարական միութիւնների մասին։ Այժմ թուղթ պատրաստող գործարաններն են յանկարծ իմացել, որ իրանք քնած են եղել. եւ ահա նրանք էլ գործ են սկսում։ Թղթի արդիւնաբերութիւնը Ռուսաստանում նոյնպէս հովանաւորված է մաքսային տարիֆով. բայց, ինչպէս եւ արդիւնաբերական միւս ճիւղերում, այդ արտօնված դրութիւնը գործարանատէրերին չէ հասկացնում, որ նրանք պարտաւոր են գոնէ կատարելագործել իրանց պատրաստած թղթերը. ինչ հարկաւոր է, ոչ ոք նրանց չէ ստիպում ու նրանք էլ հանգիստ են, գիտեն, որ ինչ էլ պատրաստելու լինեն, առնող կայ։ Այդ է պատճառը, որ Ռուսաստանի թղթերը համեմատվել անգամ չեն կարող արտասահմանեան թղթերի հետ, որոնք բացի իրանց գեղեցիկ յատկութիւններից՝ անհամեմատ էժան էլ են եւ եթէ մեզ մօտ ծախվում են ոսկու կշռով, պատճառն այն է, որ մաքսը թանգացնում է, որպէս զի Ռուսաստանի գործարանները աւելի զարգանան։ Բաւական չը համարելով այդ բոլորը, Թղթի գործարանատէրերը,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՒԱ՜Ղ, ՇԱՏ ՈՒՇ Է

Անրի Սպօնտի

Արդէն 25 տարի է, որ պարոն Սօժէն կանոնաւոր կերպով ամեն առաւօտ գնում է իր գրասենեակը։ Նա անցնում է՝ միշտ մի եւ նոյն փողոցներով եւ մի եւ նոյն մայթերով. հանդիպում է շարունակ մի եւ նոյն մարդկանց եւ միշտ գիտէ ժամը, նոյն իսկ րոպէն, երբ պիտի նրանց հանդիպի։

Այս փոքրիկ մարդը՝ կորացած, գունատ երեսով, որը նման է հին, մաշված դրամի, այն լուռ ու մունջ արարածներից մէկն է, որոնց քայլերը երբէք ձայն չեն հանում, եւ որոնց ստուերը ամենեւին հետք չէ թողնում կեանքի պատի վրա։

Ամառ-ձմեռ մի եւ նոյն զգեստն է նրա հագին. սեւ սերտուկ եւ սպիտակ փողպատ։ Նա միայնակ է՝ ամուրի, ոչ մի ազգական չունի, զուրկ է մի որ եւ է սնափառութիւնից եւ մտածում է միշտ մի բանի մասին... թէ՝ երբ է թողնելու պաշտօնը։

Ահա նա մտաւ. հովանոցը դրեց անկիւնում, հագաւ լիւստրինի թեւնոցը, գրիչը եղունգի վրա փորձեց եւ սկսեց գրել։—Կենտրօնական բաժնում նրա գործը այն էր, որ ընդունում էր խնդիրքը, դասաւորում եւ յանձնում աւելի բարձրին։—Աշխատանքը ինքն ըստ ինքեան բաւական տաղտկալի էր, բայց պարոն Սօժէն երբէք չէր ձանձրանում։—Նրա մտքին ամենեւին չէր գալիս տողամէջ կարդալ. խնդիրքը նրա համար ոչ այլ ինչ էր, եթէ ոչ... գրած թուղթ։—Խնդրատուներին նա ընդունում էր սիրով։ Նրանց խղճալի դէմքերը շոյում էին ծեր ամուրիի փառասիրութիւնը։ Նա իր համեստ դրութիւնից շատ գոհ էր։ Գոնէ ազատ էր չարքաշ կեանքի հոգսերից։

Ընդունելութիւնը սկսվեց։

Խնդրատուները մտնում են մէկ մէկ։ Նրանք քաշվում են՝ երեւի ազատ չեն զգում, իրանց նոր զգեստի շնորհիւ, բայց այնու ամենայնիւ աշխատում են պատւով պահել իրանց։

Տղամարդկանց հետ նա զիջողաբար է վարվում, խորհուրդ է տալիս, ցուցմունքներ է անում, բայց կանանց... Պարոն Սօժէն տանել չէ կարող կանանց շատախօսութիւնը, նրանց պարզախօսութիւնը եւ առանց առիթի ամբողջ իրանց անցեալի նկարագրելը։—Մի՞թէ կարող է նա՝ արդէն զառամած ամուրին, որը ոչ խղճալ գիտէ, եւ ոչ էլ մի ցանկութիւն ունի կեանքի՛ մէջ, հետաքրքրվել կանանց խղճուկ արկածներով, նրանց խղճալի պահանջներով։—Նա երբէք չէ կարողացել կանանց դուր գալ, ընդհակառակն, սկսել է կանանցից վախենալ այն օրից, երբ ջահել ժամանակ իր գլխին եւս պատեց սիրոյ բաղդը։

Մտաւ մի խնդրատու կին, ոտից մինչեւ գլուխ սեւեր հագած։

—Ամուսինս մեռաւ անցեալ ձմեռ, ինձ առանց միջոցի թողնելով, ես խնդիրք եմ տուել ձեր դիւանատուն, որ ինձ դպրոցում սպասաւորի պաշտօն տան...

Պարոն Սօժէն նրան ընդհատեց։

—Ձեր անո՞ւնը։

—Ժանէտ Լանգլուա։

—Տարի՞քը։

—42 տարեկան։

—Երեխաներ ունի՞ք։

—4 հոգի... մեծը 12 տարեկան է, փոքրիկը...

—Ո՞րտեղ էք ծնվել։

—Մանսում։

—Ներողութիւն, ինչպէս է ձեր աղջիկ ժամանակվայ անունը...

—Ժան Կայար։

Պարոն Սօժէն գունատված փնթփնթաց...

—Դուք ասացիք Ժան Կայա՞ր, ծնվել էք Մանսո՞ւմ... Դուք վարժապետի աղջի՞կն էք... Նոր փողոցում...

Կինը նայում էր նրա վրա զարմացած։ Սօժէն հանեց ակնոցը, ձեռքը տարաւ ճակատին, կարծես, մտքերի շփոթութիւնը հանգստացնելու համար։ Վերջապէս նա խօսեց փոխված ձայնով։

—Ի՞նչպէս, այս դուք էք... դուք...

Նա չէր հեռացնում կարմրած աչքերը կնոջից, որոնելով շրթունքի ծանօթ ծալքերը, տնտղելով երեսի գծագրութիւնը, որ տարիները չէին կարողացել ջնջել։

—Երեւի դուք ինձ ճանաչում էք... բայց ո՞վ էք դուք։

Սօժէն հոգոց հանեց։

—Ճիշդ է. ես այնքան փոխվել եմ... ես...

Նա խօսք չէր գտնում. բայց հարկաւոր էր մի բան ասել... Մտաւ մի նոր խնդրատու։ Սօժէն բարձրացաւ տեղից։

—Ներեցէք, տիկին. եղէք բարի, վաղը ժամը երկուսին եկէք, ես բոլորը ձեզ կը բացատրեմ։

Եւ ձեռքի ցուցումով արձակեց նրան։

II

Երեկոյեան, երբ պ. Սօժէն դուրս եկաւ շրջելու, յանկարծ նրան մի տխրութիւն պատեց։ Քանի նստած էր իր սեղանի առաջ, դիւանատան խաղաղ մթնոլորտում, նա կարողանում էր իրան հաւատացնել, որ իր մէջ ոչինչ բան չէ փոխվել։ Իսկ փողոցում, որը ամենքին հաւասար չափով է պատկանում, նա իրան զգաց կորած։ Առաջին անգամ այս փողոցը երեւաց նրան իր իսկական գոյնով՝ շքեղ, բայց սոսկալի իրականութիւն. պատերազմի դաշտ, ուր ընդհարվում եւ կռւում են մարդիկ։

Քանի այս եռացող շրջապատը նրան կլանում էր, այնքան նրա մէջ աճում էր կասկածը. եթէ ներգործական լինելը մարդկային կեանքի անհրաժեշտ պայման է, եթէ աշխարհումս ամեն բան կռւի եւ ջանքի հետեւանք է, ինչո՞ւ ուրեմն ինքը հրաժարվեց կռւից։ Արդա՞ր է ինքը... թէ նրա վարմունքը փոքրոգութիւն է եւ ստորութիւն։

Բայց նա էլ էր սիրել, սիրել էր այս մի եւ նոյն այրի կնոջը, որի հետ այժմ պատահաբար հանդիպեց 25 տարի անջատվելուց յետոյ։ Այո, սիրում էր նրան դեռ մանկութեան հասակից, այդ մի եւ նոյն կինարմատին, որի առաջ յաճախ զբօսանքի ժամերին թափում էր իր զգացմունքը. սիրել էր եւ, որ գլխաւորն էր, սիրում էր մինչեւ այսօր։ Այդ էր պատճառը, որ նա քնքշութեամբ էր վերաբերվում դէպի նոյն իսկ անշունչ առարկաները, եւ սիրում էր իր գործը։

Դիւանատան միատեսակութեամբ յոյս ունէր նա խեղդել այդ սէրը իր մէջ. իսկ սէրը քնել, ծածկվել էր, ինչպէս փոքրիկ կայծը մոխրի տակ։ Միայն դրա մէջ էր նա պտռում ապրել ցանկալու ոյժը, եւ ապրել—չը ձանձրանալու բանալին։ Միայն նրան է պարտական, որ ուրախ վայրկեաններ է կարողանում նշմարել իր տխուր կեանքում։

Նա համարեա վազելով ընկաւ տուն, քաշեց սեղանի արկղը, հանեց նամակների կապոցը։ Դողդոջուն ձեռքով բացեց խունացած ժապաւէնը, որով կապած էր կապոցը... փոշու թուխպ բարձրացաւ. հաստ թուղթը չխշխում էր նրա ձեռքում։ Նա կռացաւ... պարոն Սօժէի գանձը մեծ չէր՝ ընդամենը չորս-հինգ նամակ, մանկական միամտութեամբ գրած հրաշալիքներ—խորհուրդներ եւ խրատներ։ Քանի՜-քանի՜ անգամ նա կարդացել է այդ նամակները իր տխուր րոպէներին, դեռ այն հասակում, երբ եւ սրտով պարզ էր եւ հոգով դիւրահաւատ։ «Մի յուսահատվէք... հանգիստ մնացէք եւ հոգով տոկուն... Աստուծոյ օրհնութիւնը ձեր վրա լինի»... Սօժէն լալիս էր։ «Զգոյշ եղէք... կառքի տակ չընկնէք... ինչ գոյնի է ձեր սենեակի պաստառը»... Բերկրութեամբ լի նա էլ պատասխան էր գրում. «Ես յուսալից եմ... հոգով ուժեղ եւ հանգիստ... Աստուած ինձ չի թողնի... Մեր փողոցով կառքեր չեն անցնում... ինչ գոյնի է իմ սենեակիս պաստառը... ի հարկէ կապոյտ, դեղին ծաղիկներով»։

Շատ ուշ, երբ նրա նիւթական կացութիւնը լաւացաւ, նա սկսեց այդ ամենասովորական խօսքերի տակ հոգի եւ միտք պտռել. չէ՞ որ խօսքերն էլ հոգի ունեն, այն էլ քնքոյշ հոգի։ Բայց այդ հոգին մարդ շուտ չէ ըմբռնում, դրա ինչպէս հաղորդում է «Варшавскій Дневникъ» լրագիրը, սինդիկատ են կազմում՝ թղթի գինը 10% աւելացնելու համար։ Այդ «բարերարութիւնը» արդէն սպառողին միայն նիւթական զրկանք չէ պատճառում, այլ եւ բարոյական, մտաւոր։ Լրագիրը իրաւացի կերպով նկատում է.

Գրքեր գնողների շրջանը եւ վաճառվող գրքերի քանակութիւնը ամեն տարի համարեա մի եւ նոյն են մնում, ցոյց տալով բարձրանալու միայն մի փոքրիկ ձգտում. ուրիշ խօսքերով ասած, այն գումարը, որ ռուս ընթերցող հասարակութիւնը տալիս է մտաւոր կերակուր ձեռք բերելու, կազմում է մի յայտնի ու որոշ մեծութիւն։ Եթէ գրքերը 20%-ով թանգանան (իսկ այդպիսի թանգութիւն կարելի է սպասել, որովհետեւ միջնորդներն էլ, երեւի, գործարանական 10%-ին կաւելացնեն իրանց կողմից 10%), կարելի՞ կը լինի յոյս դնել, թէ ընթերցող հասարակութեան գրքերի տուած գումարն էլ 20%-ով կը բարձրանայ։ Մենք տրամադիր ենք կարծելու, որ, ընդհակառակն, գրքերի թանգանալը բոլորովին հակառակ հետեւանքի կը հասցնէ—այն է գնվող գրքերի քանակութեան աստիճանաբար նուազումն. նշանակում է, որ թղթի գործարանատէրերի արարքների շնորհիւ՝ գրքերը 10—20%-ով քիչ կը տարածվեն։ Թղթի գնի բարձրացումը իր տեսակի մի հարկ է, որ դնվում է կրթութեան վրա։

Եւ դա ծանր, նոյն իսկ չափազանց ծանր հարկ է, որ, անկասկած, ամենից առաջ աղքատ գրականութիւնների եւ մանաւանդ գաւառական մամուլի վրա շատ վատ կազդէ։ Վարշավայի լրագիրը ոչ միայն ցանկալի չէ համարում ռուսաց թղթի արժէքի թանգանալը, այլ եւ ասում է, որ ժամանակ է արտասահմանեան թղթերին ազատ մուտք տալ դէպի Ռուսաստան։ Դա, ճիշտ որ, շատ լաւ կը լինէր։ Մենք բոլորովին սխալված կը լինենք, եթէ էժան թղթի հարցին ոչինչ նշանակութիւն չը տանք։ Գլադստօնը իր հռչակաւոր ֆինանսական րէֆորմների մէջ, որոնք այնքան բարձրացրին Անգլիայի բարեկեցութիւնը, չը մոռացաւ եւ թուղթը. քաղաքակրթութեան համար այնքան կարեւոր այս նիւթի վրա Անգլիայում հարկեր էին դրված, հռչակաւոր մարդասէրը ջնջեց այդ հարկերը, այսինքն էժանացրեց թուղթը, իսկ էժանացնելով, նա մատչելի դարձրեց գիրքը ժողովրդական մասսաներին, կամ, ուրիշ խօսքերով, հոգեւոր կերակուրը լայն չափերով ժողովրդականացրեց։ Եւ Լուի Բլան իր «Անգլիական նամակների» մէջ իր հիացմունքն էր յայտնում, երբ անգլիական պարլամենտում ընդունվեց Գլադստօնի այն առաջարկը, թէ թղթի հարկի վերացնելուց պետական բիւջէի մէջ գոյացող պակասութիւնը կարելի է վերացնել՝ մի քիչ աւելացնելով թէյի վրա դրած հարկը։ «Միտքը յաղթեց որովայնին», բացականչում էր Լուի Բլան։ Եւ որովհետեւ այդ տեսակ յաղթութիւնը միայն կարող է իրապէս երջանկացնել մարդկութիւնը, ուստի շատ ցանկալի կը լինէր, որ թղթի գործարանատէրերին, եթէ նրանք ինքնաբերաբար անընդունակ են հասկանալու, մի լաւ դաս տրվէր այդ մտքով, այսինքն չափաւորելով նրանց «բարերարական» անչափ զարգացած ախորժակը...

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախալքալաքի երկրաշարժից վնասվածների օգտին.

Զանկօյ կայարանից՝ (Կրիմ) Եղիսաբէթ Զալբալեանից 30 րուբլի։ Նուիրատուներն են. Ե. Զալբաշեան 5 ր., Ր. Անուշիկեան, Կ. Պօղոսեան, Մ. Աբրահամեան, К. Каменщикова—3-ական ր., Դ. Պահլեվանեան, Հ. Տունտուսեան։ Գ. Զալբաշեան—2-ական ր., Վ. Մագլումեան, Ե. Պետրոսեան, Ե. Մագլումանեան, Н. Тыглiева, Т. Тыглiевъ—1-ական ր., Я. Черняевъ, Մ. Անուշիկեան—50-ական կ.։

Կգնութ գիւղից՝ (Հին-Նախիջեւանի գաւառ) Ներսէս քահ. Վարդանեանից եւ ուսուցիչ Եփրեմ Գրիգորեանից 25 ր. 70 կոպէկ։ Նուիրատուներն են. Ն. քահ. Վարդանեան, Ե. Գրիգորեան—5-ական ր., Ս. Օհանեան, Բ. Տէր-Մինասեան, Ա. Թաւաթեան, Ք. Տէր-Աւետիսեան, Ն. Թադէոսեան, Ե. Մահտեսի Ղազարեան, Ա. Մահտեսի Ղազարեան, Թ. Ալօեան—1-ական ր., Ղ. Հախնազարեան, Յ. Յարութիւնեան, Ս. Նազարեան, Բ. Ստեփանեան, Ս. Եգիգարեան, Յ. Շահբազեան, Թ. Կարապետեան, Ա. Արմզանեան, Մ. Թէոսեան, Թ. Մահտեսի Ղազարեան, Մ. Բադալեան, Ս. Տիգրանեան—50-ական կ., Պ. Աւագեան 60 կ., Յ. Տէր-Մաթէոսեան, Գ. Սահակեան—30-ական կ., Խ. Օհանեան, Ա. Թօփչեան—25-ական կ., Գ. Մարգեան, Ա. Մնացականեան, Մ. Սաֆարեան, Յ. Վարդանեան, Խորէն, Մ. Եղիազարեան, Գ. Մահտեսի Ղազարեան, Ս. Գիւլնազարեան, Հ. Բէգնազարեան, Մ. Մելքումեան, Յ. Ղազարեան, Ա. Աւագեան, Դ. Մնացականեան, Ն. Գէորգեան—20-ական կ., Սաղաթել, Կ. Բաբայեան—15-ական կ., եկեղեցու գանձանակից 1 ր. 27 կ., դպրոցի աշակերտներից 1 ր. 70 կոպէկ։ (Հանված է ճանապարհածախս 15 կոպէկ)։

Շարունակութիւն Կարսի՝ վիճակի նուիրատուութիւնների։ 1) Ուղուզլու գիւղից—Ս. Տ.-Գրիգորեան, Ա. Աւագեան—1-ական ր., Ս. Ղուկասեան, Վ. Նազարեան, Յ. Յովսէփեանց, Կ. Պապօյեան—50-ական կ., Մ. Դիլանեան 45 կ., Տէր Կարապետ (գաղթական) 35 կ., Յոյն Կիրակի, Ո. Կարապետեան, Խ. Յովակեան—20-ական կ., Բ. Ղազարեան 15 կոպէկ։ 2) Կարմիր-Վանք գիւղից—Գ. Յարթենեան 1 ր. 5 կ., Ս. Սահակեան 50 կ., Մ. Խաչօյեան 75 կ., Պ. Ապտալեան 30 կ., Խ. Ենկօյեան 1 ր., Գ. Յովսէփեան 90 կ., Ա. Յովհաննէսեան 30 կ., Ա. Ենկօյեան 80 կ., Ղ. Յարութիւնեան 10 կ., Ղ. Աւագեան 20 կ., կանայք 12 կ., Ս. Յարութիւնեան 25 կոպէկ։ 3) Մաւրակ գիւղից—Վ. Աբրահամեան, Ս. Յաքութիւնեան, Մ. Մելքոնեան, Խ. Մխիթարեան, Գ. Մարգարեան, Մ. Մարգարեան, Ղ. Յարութիւնեան, Տանուտէր Յակովբ, Յ. Պետրոսեան, Գ. Մովսէսեան, Ս. Թորոսեան, Յ. Մելքոնեան—1-ական ր., Յ. Ֆարատեան 60 կ., Վ. Յովէյեան 30 կ., Բ. Փօթիկեան 50 կ., Մ. Յովհաննիսեան 65 կ., Մ. Վարդանեան 35 կ., Յ. Կիւրեղեան 20 կ., Գ. Մանուկեան 35 կ., Մ. Յովհաննիսեան, Ս. Ասօյեան, Յ. Մարկոսեան, Շ. Վարդանեան—20-ական կ., Ա. Վարդանեան 10 կ., Գ. Գէորգեան 20 կ., Մ. Բարսեղեան 50 կ., Պ. Խաչօյեան, Յ. Ապտալեան—30-ական կ., Ղ. Մելքոնեան 50 կ., Ս. Յարէյեան 10 կ., Ս. Մկրտչեան 20 կոպէկ։ 3) Փիրվալի գիւղից—Տանուտէր Սարգիս 3 ր., Ա. Գրիգորեան 50 կ., Կ. Վարդանեան 40 կ., Յ. Եղիազարեան 20 կ., Մ. Սարգսեան 6 կ., Ս. Ջիպարաթյեան 10 կ., Ձ. Մուքօյեան 25 կ., Մ. Թօռջեան, Գ. Թօռջեան, Մ. Թօռջեան, Գ. Մուրադեան—20-ական կ., Ս. Յովհաննէսեան 5 կ., Ն. Թովմասեան 1 ր., Բ. Նուբէգեան 20 կ., Ս. Մատօյեան, Յ. Յովսէփեան—40-ական կ., Մ. Մուրադխանեան 50 կ., Յ. Ալէքսանեան 25 կ., Մ. Բալօյեան, Թ. Մարկոսեան—1 ր. 25-ական կոպէկ, Յ. Ղարիբջանեան 60 կ., Գ. Ասլանեան, Յ. Ուստեանց—30-ական կ., Գաղթական մանուկ 10 կ., Ս. Զօրօյեան 3 ր., Ա. Մարգարեան 15 կ., Մ. Աֆրիկեան, Մ. Սիմէօնեան, Տէր Մարկոս—20-ական կ., Մ. Մանուկեան 50 կ., Մ. Գէորգեան 10 կ., Յ. Աւագեան 50 կ., Ա. Մանուկեան 25 կ., Ա. Աւագեան 20 կ., Ա. Մանուկեան 25 կ., Մ. Յովհաննէսեան 25 կ., Կ. Սարգսեան 40 կ., Թ. Շահինեան 50 կ., Գ. Սէփինեան, Գ. Սիմէօնեան—60-ական կ., Կ. Մատօյեան 30 կ., Ս. Գրիգորեան 60 կ., Ա. Պետրոսեան 50 կ., Գ. Մանուէլեան 63 կ., Մ. Մանուէլեան 62 կ., Վ. Մատօյեան 30 կ., Յ. Տէր-Յովհաննիսեան 55 կ., Ա. Ամիրխանեան 20 կ., Յ. Սիմէօնեան 60 կ., Տէր Անանիա 1 ր., Ա. Կարապետեան 15 կ., Ս. Կարապետեան 20 կ., Գ. Սարգսեան 50 կ., Ա. Յակովբեան 20 կ., Պ. Գալօյեան, Գ. Սարգսեան, Յ. Զօրօյեան—50-ական կ., Ա. Մարգարեան, Ս. Մարգարեան—30-ական կ., Յ. Ղազիքեան, Մ. Զատիկեան—60-ական կ., Դ. Գէորգեան 15 կ., Ս. Գէորգեան 60 կ., Գ. Մովսէսեան 30 կ., Մ. Մանուէլեան 15 կ., Մ. Այվազեան 60 կ., Վ. Ծառուկեան 1 ր. 20 կ., Պ. Պօղոսեան 60 կ., Մ. Յովակեան 30 կ., Ս. Հլչաթեան 12 կ., Յ. Զօրօյեան 1 ր. 25 կ., Կ. Օսկանեան 15 կոպէկ։

Ընդամենը 55 րուբլի 70 կոպէկ։

Մինչեւ այժմ ստացել ենք 32,209 ր. 11½ կոպէկ, երեք ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Ուղարկել ենք 32,000 րուբլի, 3 ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Մեզ մօտ մնում է 209 ր. 11½ կ.։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մարտի 6-ին

Կարդալով «Մշակի» 4 եւ 30 համարներում լոյս տեսած տեղեկութիւնները պ. Ն. Կազաչենկօյի մտադրութեան մասին, կարծում եմ, ընթերցողը աւելորդ չի համարի իմանալ, թէ ով է Կազաչենկօն եւ ինչ է արել մինչեւ այժմ հայկական երաժշտութեան համար։

Այս նամակով ես կաշխատեմ մի պատասխան տալ այդ հարցերին։

Գէորգի Ալէքսէեվիչ Կազաչենկօ 14 տարեկան հասակում փախել է հայրական տնից, հակառակ բարեկամների եւ գլխաւորապէս ծնողների կամքին՝ ընտրել է երաժշտական ասպարէզը։ Ներկայումս, չը նայելով իր ջահէլ հասակին (ընդամենը 42 տարեկան է), նա արդէն հռչակված է մայրաքաղաքների երաժշտական աշխարհում. եւ շնորհիւ արտասահմանեան կոնցերտներին՝ պարոնին շատ լաւ ճանաչում են նաեւ Պարիզում։ Նոյն երիտասարդական աշխոյժով, նոյն անսպառ եռանդով նա աշխատում է եւ այժմ։ Տարի չէ անցնում, որ պ. Ն. Կազաչենկօ նոր-նոր աշխատութիւններ լոյս չընծայէ։ Շնորհիւ այս բոլորի, պ. Կազաչենկօ այժմ վարում է Կայսերական թատրոնի երգչական խմբի կառավարչի պաշտօնը, որ պատասխանատու եւ շատ լուրջ գործ է։

Սակայն պ. Կազաչենկօն չէ բաւականացել միայն ռուսական երաժշտութեամբ։ Նա հէնց իր գործունէութեան սկզբից առանձին ուշադրութիւն է դարձրել արեւելեան երաժշտութեան եւ գլխաւորապէս հայկականի վրա։ Անա այդ նպատակով յարգելի կոմպոզիտորը, 1879—1893 տարիների ընթացքում, 5 անգամ ուղեւորվել է Կովկաս եւ չորս ճանապարհորդութեան ժամանակ նա բացառապէս զբաղվել է կովկասեան եղանակների ձայնագրութեամբ։ Հէնց 80-ական թւականների սկզբից պ. Կազաչենկօ պարապում է հայկական եղանակների ձայնագրութեամբ։ Յարգելի կոմպոզիտորը ձայնագրել է ազգային (հին եւ նոր), ժողովրդական երգեր, զանազան պարեր, եղանակներ, գլխաւորապէս մեր եալլիները, վերջապէս մի քանի շարականներ։ Այդտեղ կան կտորներ թէ սոլիստների համար, թէ խմբական երգեցողութեան եւ թէ նուագածու եւ երգեցիկ խմբերի համար։ Ես դժուարանում եմ այդ բոլորը մի

համար հարկաւոր է երկար սիրել։ Խօսքերը խիստ լաւ պահպանում են արտայայտող մտքի փայլը նոյն իսկ շատ ու շատ տարի անցած, երբ թուղթը դեղնում ու թանաքը խունանում է։ Կիսաբաց արկղի առաջ, աղօտ լոյսի մէջ, ծերունու մռայլ աչերը կարդում են այն, ինչ չէր աջողվում կարդալ պատանեակին, որը դէպի ապագան էր ուղղել իր հայեացքը։

Նա աւելի եւ աւելի էր կռանում, նամակները տնտղում։ Այժմ նա համոզված էր, որ իր սէրը հաստատ է։

Բաց արաւ պատուհանը... Սօժէն լալիս էր։ Նա ողբում էր, թէ ինչու իրերի մէջ կայ մի հակադրական ոյժ, որ միանգամայն խորտակում է մեր հաշիւները եւ ծրագիրները։—Երբ մարդիկ միմեանց սիրում են, պիտի յայտնեն միմեանց—դա շատ պարզ է։ Երբ բաղդը անցնում է մօտովդ, պիտի բռնես նրան. իսկ Սօժէնի բաղդաւորութիւնը որքան մօտիկով փախաւ նրանից։ Նրա խորտակողը անվճռողականութիւնն էր։ Աղջիկը կոտրտվում էր, իսկ իր մէջ համարձակութիւն չը կար քայլ անելու։ Ճիշտ է, շատ անգամ զբօսնելիս, նկատել էր, որ նրա ձեռքը դողում է իր ձեռքում։ Հարիւր անգամ եկել էր նա աղջկայ մօտ, իր մաքուր սերտուկը հագին եւ սերտած նախադասութիւնը բերանում, բայց բաւական էր չեմքում երեւար աղջիկը եւ Սօժէն շփոթվում ու կարմրում էր, ամաչում էր իր սերտուկից եւ մոռանում իր պատրաստի խօսքը։ «Ա՛յ, հէնց հասնենք երրորդ ծառին, կասեմ», սիրտ էր տալիս նա ինքն իրան. բայց երրորդ ծառը ինչ ծիծաղելի տեսք ունի, բունը ծռվել է, կարծես ծիծաղից թուլանում լինի, կեղեւը յետ է գնացել, սպիերը բացած քլքլոցի պէս։ «Ա՛յ, չորրորդ ծառի մօտ։ Այ, հինգերորդի մօտ»... Իսկ Սարտի ափին ինչն է շատ... ծառեր։

Այսպիսով նա յետաձգում էր մի օրից միւս օր, մի ծառից միւս ծառ, իսկ ժամանակը անցնում էր։—Բարկութիւնից նա հեռացաւ Պարիզ, հպարտութեամբ մնաց այնտեղ, այնտեղ էլ ծերացաւ, սովորելով իր դրութեան։ Բայց այն, ինչ նա չը կարողացաւ ասել աղջկան, ասաց մի ուրիշը, մի սիրուն տղամարդ, մէկը նրանցից, որոնք գիտեն կանանց հետ խօսել եւ որոնց էլ սիրում են կանայք, բնազդաբար գուշակելով, թէ դրանք իրանց ժամանակով կը ստիպեն.. տանջվել։

Եւ միայն 25 տարի անգոյն ճգնաւորութիւնից յետոյ Սօժէն զգաց իր սխալը. Նրա ծերացած սիրտը սկսեց յուսակտուր բաբախել կրծքում, իսկ աչքերը արտասուք էին վիժում։

Շատ ուշ է. նա չուռ եկաւ, հայեացքով չափեց իր ամուրի կացարանը եւ դառն կերպով ծիծաղեց։ Ամեն բան սարգին-կարգին է. երկաթէ մահճակալ, նրա առաջ, կապերտի վրա, սիրուն շարած են նրա չուստերը. պահարանում գրքերը երկար շարք են բռնել.—հոգատար կերպով ստեղծած մի մշտական բուն... տխրելու համար։—Ո՞ւր է սիրող, հաւատարիմ կինը։—Ինչո՞ւ նա մի համբոյրով չէ ցրում քո անհուն վիշտը։ Ո՞ւր են երեխաները իրանց լաց ու քրքիջով, որոնց անիծում եւ պաշտում են։

Այս խոր վշտի մէջ մի նոր միտք նրա հոգին պղտորեց։ Բայց նա՛, աղջիկը սիրո՞ւմ էր իրան, հը՞...։ Նա պառկեց, բայց քնել չը կարողացաւ։ Նրա մտածմունքը վաղվայ օրն էր։

III

Նա չուռ եկաւ եւ նայեց ժամացոյցին։ Երբէք ժամանակը նրա համար այսքան դանդաղ չէր անցել։ Մինչդեռ միայն մի ժամ է անցել։

Բայց ահա եւ այրին։ Պարոն Սօժէն վերկացաւ, տեղ առաջարկեց իր դիմացը։ Տիկինը քիչ շփոթված էր երեւում պաշտօնեայի վարմունքից, բայց այնու ամենայնիւ իրան պահում էր համեստ խնդրատուի դերի մէջ։

Պ. Սօժէն հանեց ակնոցը, հազաց եւ հաւաքելով ամբողջ քաջութիւնը, միանգամից սկսեց։

—Տիկին, եթէ թոյլ կը տաք՝ ձեր գործի մասին կը խօսենք քիչ յետոյ, իսկ այժմ ես ձեզ պիտի աւելի կարեւոր բան հաղորդեմ։ Այո, աւելի կարեւոր... Երէկ դուք ապշած մնացիք իմ հարցերից, երեւի դուք ինձ չը ճանաչեցիք... Ես Պիեռ Սօժէն եմ։

Տիկինը արագ բարձրացաւ տեղից։

—Պիեռը... դո՞ւք...

—Այո։ Պիեռը։

Տիրեց լռութիւն, յետոյ նա կամաց աւելացրեց։

—Այո, ես եմ, Պիեռ Սօժէն, դարբնի՝ որդին. ձեր տունը մեր տան դիմացն էր, իսկ տան առաջ պարտէզ. քանի՜, քանի՜ անգամ մենք այնտեղ Ռօբինզօն ենք խաղացել. դուք իմ կինն էիք լինում...

Տիկինը նոյն տոնով պատասխանեց։

—Ես լաւ յիշում եմ մեր խաղերը, կարծես այս րոպէին տեսնելիս լինեմ տնակը, այն աւազանը ոսկէ ձկնիկներով, բարդի ծառը... ինչ բարձր էր նա մեզ երեւում... Դուք շատ սիրում էիք ծառ բարձրանալ։

—Ի՜նչ բաղդաւոր էինք այն ժամանակ. աշխարհը մերն էր. բայց ինչ փոքր էր այդ աշխարհը, որը պատած էր երեւակայական չրջապատով. այնտեղ ծանօթ էին մեզ բոլոր ծառերը։

Նա խօսում էր կարծես ոչ իր մասին, այլ մի օտարի մասին...

—Յիշո՞ւմ էք ձմեռվայ ձիգ երեկոները, ինչ արագութեամբ էին մեզ համար անցնում. իսկ պառաւ Բրիգետին, որ շարունակ իր օթոցում մրափած էր լինում. իսկ այն հաստ գիրքը, որ միասին կարդում էինք։ Մի անգամ միասին գնացինք Սարտի ափը զբօսնելու, ձեր հագին սպիտակ, բարակ զգեստ կար, կարմիր պուտերով, իսկ գլխարկը այնպիսի էր, որի նման պատկերներում դրած է լինում հովուհու գլխին։ Ես շատ յուզված էի։ Դուք երգում էիք... Յետոյ նստեցինք հանգստանալու եւ քնեցինք։ Օրեր են լինում, երբ օդի փաղաքշանքը շատ ջերմ է լինում եւ մարդու սիրտը պատրաստ է կտոր կտոր պատռվելու։ Ձեզ նայելով, որ այդքան վստահ հանգստանում էիք իմ կողքին, ես հասկացայ, որ ձեզ սիրում եմ. ես ագահաբար նայում էի ձեր վայր թողած թերթերունքին, աշխատում էի բարձրացնել սրտի հայելու այդ վարագոյրը եւ աչքերիդ մէջ կարդալ այն, ինչ ամեն մարդ թագցնում է եւ պահում իր մէջ... Բայց դուք արթնացաք, կարմրատակեցիք... այն օրից ես էլ չէի համարձակվում ձեզ վրա նայել։

—Ես յիշում եմ, սրանով էլ վերջացաւ մեր բարեկամութիւնը։ Դուք գնացիք Պարիզ եւ էլ չը վերադարձաք։ Երկու տարուց յետոյ ես մարդու գնացի։

—Դուք էլ էք տանջվել...

Տիկինը ձեռքով կանգնեցրեց նրան։

—Ինձ վայել չէ ամուսնուս քննադատել. նա մեռած է։ Վիշտը նամուսի բան է. սիրով պատմում են իրանց մասին միայն բաղդաւոր մարդիկ։

Սօժէն նայում էր նրան հիացմունքով եւ խղճալով։ Սեւերը նրա հասակը աւելի բարձր էին ցոյց տալիս. դէմքը պահպանել էր իր գեղեցկութիւնը. վիշտը միայն ազնուացրել էր նրան։ Տանջվել կարողանում են միայն կանայք։

Տիկինը ծիծաղեց։

—Դուք չէք բարկանում ինձ վրա։

—Ոչ, բայց ես կը ցանկայի մի բան եւս իմանալ... միայն խնդրեմ անկեղծ եղէք։—Ես խոստովանեցի այսօր, որ սիրում էի ձեզ... իմ կեանքս փչացած է։ Ես գիտեմ, որ ես պիտի

Նա կանգ առաւ, իր խօսքերի իմաստից վախեցած։ Տիկինը գունատվեց։

Լսեցէք... Այն առաւօտ, յիշում էք... Սարտի ափին, եթէ ես... եթէ ես... խնդրէի ձեր ձեռքը՝ դուք ինչ կանէիք։

—Ես կը համաձայնէի։

Սօժէն կախեց գլուխը։ Նա եւս կը համաձայնէր։ Եւ երկուսն էլ միասին ասացին։

—Աւա՜ղ, այժմ շատ ուշ է։

Մտաւ դիւանատան գլխաւորը եւ այլեւս մնաց չէմքում։

Պարոն Սօժէն վեր կացաւ եւ գլուխ տալով ասաց իր սովորական ոճով։

Տիկին, հանգիստ եղէք, ձեր խնդիրքը յանձնված է ուր հարկն է, գործը իր կարգին կերթայ։

Անուշ. Բալանթար

առ մի թուել, բայց կը յիշեմ մի քանիսը միայն. «Կռունկ», «Որ մահկանացու», «Հերիք որդեակք», «Զայն տուր, ով ծովակ», «Մեծեռնակ», «Մայր Արաքսի», «Զէյթունցոց մարշը», «Զայնը հնչեց Երզրումի», «Բերդիսը դուրս էլայ», «Ամպել ա, ձիւն չի գալիս», «Զիմ վզիս վզնոց կիտամ», «Ջան խման» եւ այլն եւ այլն։ Այժմ տպագրութեան համար պատրաստուած են 42 օրինակ երգեր։ Ի թիւս այլ գրուածքների առաջնակարգ տեղ են բռնում եւ «Армянскія сюиты», երաժշտական պատկերները։ Մայրաքաղաքիս յայտնի թերթերը, «Новости», «Петерб. Вѣдомости», նոյն իսկ «Новое Время»-ն առանձին գովասանքով են խօսում այդ աշխատութեան մասին։

Յարգելի կոմպօզիտորը կօնցերտներ է տուել Խարկովում, Պետերբուրգում եւ Պարիզում։ Համարեա ամեն տարի Մոսկվայի եւ այստեղի «հայկական երեկոյթներում» երգել եւ նուագել են Կազաչենկօյի աշխատութիւններից շատերը։ Վերջապէս, ահա մօտ 10 տարի շարունակ պարոնը, առանց որ եւ է վարձատրութեան, կառավարում է մեր երեկոյթներում նուագածու եւ երգեցիկ խմբերը։ Ահագին աջողութիւն են ունեցել 1898 թուի Պարիզի կօնցերտները։ Բոլոր թերթերը վկայում են, որ պ. Կազաչենկօն լաւ է ըմբռնել արեւելեան, մանաւորապէս հայկական երաժշտութեան ոգին եւ այդ է պատճառը, որ առանձին ճշտութեամբ, առանց աղաւաղման եւ եղանակների եւրօպականացման, ձայնագրում է մեր երգերը լուսանկարչական գործիքի ճշտութեամբ։

Մենք տեսնում ենք, որ պ. Կազաչենկօ ուսումնասիրում է մօտ 20 տարի մեր երաժշտութիւնը, բայց շատերս այդ չը գիտենք։ Այդպիսի մարդկանց հարկաւոր է խրախուսել։ Չէ՞ որ մենք սովորաբար ասում եւ լսում ենք, որ օտարազգիները մեզանով չեն հետաքրքրվում եւ տեղն ընկած ժամանակ՝ ինչպէս խիստ դատապարտում ենք։ Ես կարծում եմ, որ միայն Կազաչենկօն չէ, այլ ուրիշ ասպարէզներում գործող օտարազգիներ շատ կան, որոնք մեզ անծանօթ են եւ մինչեւ այժմ ոչ մի համակրութեան ցոյց չեն տեսել մեր կողմից։

Ի պատիւ պ. Կազաչենկօի կասենք, որ նա մեր երաժշտութեամբ պարապելիս ամենեւին խրախուսանքի չէ սպասել, նոյն իսկ եղել են տգեղ վարմունքներ հայերիս կողմից։

Այժմ էլ պ. Կազաչենկօ սիրում է հայկական երաժշտութիւնը, առանձին պատրաստականութեամբ ձայնագրում է ամեն երգ։ Ես կարծում եմ, հայ հասարակութիւնը ամենայն սիրով պէտք ընդունէ Օդէսայի հայ ուսանողների հրաւէրը եւ նիւթականապէս նպաստէ պ. Կազաչենկօյին իր համակրելի նպատակը իրագործելու համար։

Մեր համեստ կարծիքով՝ շատ լաւ կը լինէր, եթէ յարգելի կոմպօզիտորին միջոց տային առաջիկայ յունիս եւ յուլիս ամիսներում նորից ճանապարհորդել Անդրկովկասում եւ գրի առնել մեր նոր ժողովրդական երգերը, լսելով անմիջապէս ժողովրդի բերանից։ Որքան մեզ յայտնի է, պ. Կազաչենկօն ամենայն սիրով յանձն կառնի առանց որ եւ է վարձատրութեան այդ գործն էլ, եթէ մենք նրան տանք հարկաւոր ճանապարհածախսը։ Գոնէ դրանով թէեւ ուշ, բայց էլի բարոյապէս վարձատրած կը լինենք յարգելի կոմպօզիտորին իր երկարամեայ աշխատութեան համար։

Ց. Չախմախսազեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մարտի 20-ին

Երէկ, մարտի 19-ին, երեկոյեան ժամի 5-ից սկսած, Բիբի-Էյբաթի բոլոր ֆիրմաներում մահվան տխուր կոչնակի նման՝ վերին աստիճանի տխուր, մելամաղձոտ ձայնով, հնչեցին սուլիչները՝ յայտարարելով հրդեհի չարագուշակ լուրը։ Գուցէ ոչ մի բան առաջին անգամ լսողի վրա այն աստիճան սիրտ կտրատող, յուզիչ տպաւորութիւն չի անում, որքան ամեն կողմից իրար խառնվող ձայների այս տեսակ աղիողորմ հառաչանքը, որոնք ժամերով այնքան դառն, այնքան սրտակտուր եղանակով հնչվում էին ամեն կողմից։

Հրդեհ... հրդեհ, լսվում էր ամեն տեղ եւ ամենքը վազում էին դիտելու դժբաղդ դէպքը։ Այս րոպէիս, ամբողջ երկնակամարը մութ հագած՝ գնալով մռայլում, աւելի դաժան կերպարանք է ստանում. սեւ, մրոտ ծուխը շրջապատել է չորս կողմը, աջ ու ձախ տարածելով հաստ, կարմիր լեզուակներ։ Այրվում են Զուբալովի նաւթահորերը, որոնք, ոմանց ասելով, մօտերս 18,000,000 րուբլով վաճառված են անգլիական «Բանկ» ընկերութեան։

Դէպքը այսպէս են պատմում։ Նոր մաղութ քաշած ժամանակ, չփում է տեղի ունեցել քաշող եւ հորում եղած խողովակների մէջ, եւ այդ չփումից առաջացել է կայծ, որի ժամանակ գազը բռնկվելով՝ սկսել է իսկոյն եւ եթ այրվել, եւ այրել տախտակամած հորը։ Շնորհիւ մի կողմից այն հանգամանքի, որ հորերը իրար շատ մօտ էին փորած, միւս կողմից հիւսիսային քամու յանկարծակի բարձրանալուն, մի կարճ ժամանակում, հրեղէն լեզուները տարածվելով՝ բռնկեցրին եւ կողքի մի քանի հորեր, թւով 8—10, որոնք, առանց բացառութեան, այրվեցին, մոխիր դարձան։

Մարդկանց կորուստ չէ եղել։ Վնասը առ այժմ դեռ յայտնի չէ, որովհետեւ հրդեհը դեռ շարունակվում է, բայց ենթադրվում է, թէ մօտաւորապէս մի քանի հարիւր հազարների կը հասնի։

Կիրակի լինելու պատճառով, ամբողջ Բագուն թափվել էր դիտելու հրդեհի տեսարանը։

Ա. Տէր-Ներսէսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է, հանգուցեալ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանը 17 տարի սրանից առաջ կտակել էր 25,000 րուբլի, որ պէտք է 125 տարիների ընթացքում չահեցվի մինչեւ որ հասնի 12 միլիօն գումարի. այն ժամանակ նա կը գործադրվի զանազան կրթական եւ բարեգործական նպատակների համար։ Ներկայումս, առ 1 յունվարի 1900 թւի, այդ գումարը հասել է 78,885 րուբլու 91 կօպէկի։ Գումարը գտնվում է Մոսկվայի պետական գանձարանում։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան մէջ գոյութիւն ունի մի յանձնաժողով, որ քննում է կաթնատնտեսութեան վերաբերեալ հարցերը։ Այդ յանձնաժողովը ցանկութիւն է յայտնել, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրները, հիմնել Ռուսաստանում մի բարձրագոյն կաթնատնտեսական ինստիտուտ։ Երկրագործութեան մինիստր Երմոլօվ բոլորովին համաձայնվել է այդ ցանկութեանը, բայց եւ այնպէս, ներկայ րոպէում աւելի յարմար է դատում հիմնել կաթնատնտեսական բաժանմունք կամ կուրսեր՝ կից որ եւ է երկրագործական դպրոցի։ Այդպիսի դպրոց, մինիստրի կարծիքով, կարող է լինել Գօրեցկի դպրոցը, որ ունի յարմարաւոր շինութիւններ եւ կաթնատնտեսական ագարակ, իսկ դասատուներ կարող են լինել դպրոցում ծառայող մասնագէտները։

—

Մեզ հաղորդում են, որ Հաւլաբարի էժանագին գրադարանի օգտին տուած ներկայացումից գոյացել է զուտ արդիւնք 411 րուբլի։

—

Ռուս նշանաւոր զօրավար Սուվօրօվի յիշատակին նուիրված տօնախմբութիւնները, ինչպէս հաղորդում է «Россія» լրագիրը, կը կատարվեն Պետերբուրգում առաջիկայ մայիսի 5-ին։ Այդ օրը Ալէքսանդրօ-Նեւսկի վանքի Աւետման եկեղեցում (որտեղ թաղված է Սուվօրօվի մարմինը) կը մատուցվի պատարագ եւ ապա կը կատարվի հոգեհանգիստ։ Նոյնը կը կատարվի եւ «Սուվօրօվեան» եկեղեցում, որ այդ ժամանակ Կօնչան գիւղից տեղափոխված կը լինի Պետերբուրգ։ Մայիսի 6-ին տեղի կունենայ զօրահանդէս ի պատիւ քաջ զօրապետի, իսկ 7-ին հանդիսաւոր նիստ գլխաւոր շտաբի Ակադեմիայում, որ ամբողջովին նուիրված կը լինի ճառախօսութիւնների Սուվօրօվի մասին եւ պատգամաւորների ընդունելութեան զանազան հիմնարկութիւնների կողմից։

—

Կանանց գիւղատնտեսական կրթութեան յանձնաժողովը մօտ օրերումս կսկսէ իր ժողովները Պետերբուրգում։ Այն հարցերի ծրագիրը, որ պէտք է ենթարկվի յանձնաժողովի քննութեան, կազմված է հետեւեալ կէտերից։ 1) Կազմակերպութիւն տնարարութեան գործնական ուսումնարանների՝ մանր եւ միջակ տների համար տնտեսուհիներ պատրաստելու։ Կազմակերպութիւն գործնական ուսումնարանների գիւղատնտեսութեան զանազան ճիւղերը ուսուցանելու համար։ Կազմակերպութիւն գիւղատնտեսական սեմինարիաների, միջնակարգ գիւղատնտեսական դպրոցների եւ առանձին ինստիտուտների ու կուրսերի կրթված տնտեսուհիներ պատրաստելու համար։ 2) Արքունի գանձարանի մասնակցութեան չափը զանազան տեսակ գիւղատնտեսական ուսումնարանների պահպանութեան գործում։ 3) Գիւղատնտեսական ո՞ր տեսակ ուսումնարանները ցանկալի եւ անհրաժեշտ են այժմեան ժամանակ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 18-ին հողին յանձնեցին ագուլեցի վաճառական Խուդի Էլչիբէգեանի կնոջ մարմինը. պարոնը իր կնոջ յիշատակին նուիրեց թեմական դպրոցին 500 րուբլի։»

—

ԳԵՏԱԲԷԿԻՑ (Գանձակի գաւառ) մեզ գրում են. «Մարտի 10-ին այստեղ, գիշեր ժամանակ, մի հայ մտնում է մի ուրիշ մարդու տուն եւ բռնաբարում է տանտիկնոջը։ Այդ ժամանակ վրա է հասնում կնոջ մարդը եւ խեղդում է իր հակառակորդին, ու գնում է ոստիկանատան յայտնում, որ ինքն է սպանողը։ Ամսի 15-ին էլ՝ մի թուրք ուղիղ բազարի մէջ ծանր կերպով վիրաւորեց մի այլ թուրքի։ Իսկ հինգ օր յետոյ մի հարուստ թուրք վաճառականի 17 տարեկան որդուն սպանեցին այստեղից ոչ այնքան հեռու։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մենք ժամանակին հաղորդել էինք արդէն, թէ անգլիական թագուհին եւ Ուէլսի պրինցը չեն կամենում այցելել Պարիզի համաշխարհային ցուցահանդէսը՝ վիրաւորված լինելով ֆրանսիական մամուլի անզուսպ յարձակումներից եւ բազմաթիւ ծաղրանկարներից, որոնք ուղղված էին անձնականապէս թագուհու դէմ։ Այժմ, ինչպէս հաղորդում են արտասահմանեան լրագրները, անգլիական կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարել է, թէ Ուէլսի պրինցը կուղեւորվի Պարիզ ապրիլ ամսի վերջերում եւ կը մնայ այնտեղ առ ժամանակ, որպէս ֆրանսիական կառավարութեան հիւր։

—Հազուագիւտ երեւոյթ է անգլիական մինիստրների կեանքում այն դէպքը, որ պատահեց մարտի 10-ին համայնքների ժողովում, երբ պահպանողական կուսակցութեան լիդեր Բալֆուր ստիպված էր հրապարակաբար յայտնել, թէ ինքը համաձայն չէ իր ընկեր-մինիստրների հետ։ Այդ օրը քննվում էր Դուբլինում կաթոլիկ համալսարանի բացման հարցը, որ բարձրացրել էր իրլանդացի պատգամաւոր Ֆարրել՝ կապելով այն բիւջէտի քննութեան հետ։ Կառավարութեան կողմից պատասխանում էր Բալֆուր։ Նա անկեղծութեամբ խոստովանեց, թէ գտնվում է շատ դժուար դրութեան մէջ, որովհետեւ ինքը անձնականապէս միշտ կողմնակից է եղել եւ այժմ էլ կողմնակից է այդ համալսարանի բացմանը, բայց չէ կարողանում հարկադրել իր ընկեր-մինիստրներին համաձայնվել իր հետ այդ հարցում։ «Ամեն ինչ, որ ես կարող եմ անել,—ասաց Բալֆուր, կայանում է նրանում, որ աշխատեմ համոզել իմ ընկերներին չը հակառակել այդ մտքին, եւ ես այդ անում եմ, որքան հնար ունեմ, համոզված լինելով, որ իրլանդացիների ցանկութիւնը բոլորովին իրաւացի է։ Կաթոլիկները ահագին մեծամասնութիւն են կազմում Իրլանդիայում։ Վերջին դարաշրջանի ընթացքում նրանք գտնվում էին այնպիսի օրէնքների ճնշման տակ, որոնց պատճառով առաջինը ես եմ կարմրում։ Ներկայ րոպէում նրանք կամենում են իրաւունք ստանալ կրթելու իրանց երեխաներին այնպէս, ինչպէս իրանց կամքն է եւ ցանկանում են յանձնել այդ կրթութիւնը իրանց հաւատակիցներին։ Դա շատ բնական է»։ Սակայն, Բալֆուրի ասելով, պահպանողական կուսակցութեան եւ մինիստրների մեծամասնութեան տրամադրութիւնը ի նպաստ համալսարանի չէ, ուստի եւ նա յարմար չէ համարում այդ հարցը բարձրացնել հիմա։ Երբ Բալֆուր վերջացրեց իր ճառը, Ջօն Մօրլէյ ազատամիտների կողմից եւ Գիլլի իրլանդացիների կողմից շնորհակալութիւն յայտնեցին նրան այն «ազնիւ, վսեմ եւ մեծահոգի» յայտարարութիւնների համար, որ նա արեց ժողովում, բայց եւ այնպէս պահանջեցին անյապաղ վիճաբանութիւնների ենթարկել համալսարանի բացման հարցը։ Ժողովը, 177 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 91-ի, մերժեց այդ առաջարկը։

—Ֆրանսիայի ներկայացուցիչներից մէկը Հաագայի կօնֆերենցիայում, Դ'Էստուրնէլ «Revue de Paris»-ում բացատրում է, թէ պետութիւնները չեն կարող առաջարկել իրանց միջնորդութիւնը անգլո-տրանսվաալեան պատերազմը դադարեցնելու մասին, որովհետեւ առաջ, Հաագայի կօնֆերենցիային մասնակցելու հրաւէրներ ուղարկելիս, նրանք համաձայնեցին չը հրաւիրել հարաւ-աֆրիկական հանրապետութիւններին եւ այդպիսով նրանց հպատակ ճանաչեցին Անգլիային։ Եթէ Տրանսվաալին տեղ տրվէր կօնֆերենցիայում, այն ժամանակ նա կը ճանաչվէր անկախ պետութիւն. այն ինչ այժմ պետութիւնները անկարող են հրաժարվել այն հայեացքից, որ արտայայտել են 9—10 ամիս առաջ։

—Զէյթունի գայմագամ յոյն Ստեփանակի էֆէնդիին, որի վրա հայերը գանգատ էին տուել նրա գործած զեղծումների համար, թիւրքական «Իգդամ» լրագրի ասելով, պետական խորհուրդն արդարացրել է եւ նորից հաստատել նախկին պաշտօնում։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 21-ին Թագուհի Կայսրուհին այցելեց կանանց ազգասիրական ընկերութեան ուսումնարանը յանուն Գօլիցինի.

Մարտի 21-ին Նորա Մեծութիւնները այցելեցին Կայսրուհի Մարիա Ալէքսանդրօվնայի կանանց ձեռագործական ուսումնարանը։

ՍԻՄՕՆՍՏԱՈՒՆ։ Գերի բօէրների մէջ մահվան դէպքերը չափազանց յաճախ են կրկնվում։ Իշխանութիւնները աշխատում են հիւանդութիւնների առաջն առնել։ Այստեղ հասաւ մի ուրիշ բեռնակիր նաւ, որ աւելի յարմարութիւններ ունի։ Սիմօնստաունում եւ Գրինօյտում գերի բօէրներից 20 հոգի վտանգաւոր հիւանդ են, 40-ը՝ ծանր, 60 հոգի հիւանդ են տիֆով եւ կարմրուկով, բայց հիւանդութիւնը կանոնաւոր է ընթանում։

ԲՕԷՐՆԵՐԻ ԲԱՆԱԿ ՍՄԱՑԼԴԵԼԻ ՄՕՏ։ Բրադֆօրտի եւ Բլումֆօնտէնի միջեւ տաք կռիւ տեղի ունեցաւ։ Էրմէլօյից եւ Բակկերստրօմից եկած զօրաբաժինները յարձակվեցին 7,000 անգլիացիների վրա եւ յետ քշեցին նրանց՝ ծանր կորուստ հասցնելով թշնամուն։ Այստեղ եկած վիրաւորները պատմում են, թէ պատերազմը կատաղի էր. կռւում էին ամբողջ գծի վրա։ Անգլիացիները մի քանի անգամ յարձակումն գործեցին, բայց յետ մղվեցին։ Բօէրները փոքր ինչ առաջ գնացին, այսու ամենայնիւ վերջնական հետեւանքը յայտնի չէ։ Բօէրներից սպանվեցին եւ վիրաւորվեցին 9 հոգի։ Բրադֆօրտից ստացած տեղեկութիւնների համաձայն՝ 2000 բօէրներ աջող յարձակումն գործեցին 3000 անգլիացիների վրա, բայց վերջիններին օգնութեան հասաւ 13,000 հոգուց բաղկացած մի զօրաբաժին։ Բօէրները ստիպված էին յետ նահանջել. նրանց կորուստը չնչին է։

ԼՕՆԴՕՆ։ Երեկոյեան լրագրներում հրատարակված է մի հեռագիր Բլումֆօնտէնից, մարտի 19-ից, որ հաղորդում է, թէ անգլիական 19-րորդ բրիգադան արագացրած քայլերով հասաւ Թակարդի տեղը եւ կռւի բռնեց թշնամուն։ Բօէրները հետզհետէ յետ քաշվեցին։ Ֆրէնչի շնորհիւ՝ բօէրների մի բազմաթիւ զօրաբաժին, որ գնում էր դէպի Բլումֆօնտէնի ջրանցքը, կորցրեց համարեա իր կազմի $^{1}/_{10}$ մասը։ Բլումֆօնտէնում չեն կասկածում, թէ բօէրների գրաւած թնդանօթները եւ սայլերը յետ կառնվեն։

ԲՈՒՇՄԱՆՍԿՕՊ։ Ջրանցքը դեռ եւս բօէրների ձեռքին է։ Անգլիական թնդանօթները երէկ ռմբակոծում էին այդ դիրքը։ Երբ թշնամին սկսեց պատասխանել, Իօրկշիրի գունդը առաջ գնաց պաշտպանելու անգլիական թնդանօթները, որոնք դրանից յետոյ տարվեցին դէպի Գրօս։ Լուրերին նայելով՝ բօէրների փոքրաթիւ զօրաբաժինները գնում են դէպի հարաւ եւ արեւելք։

ԼՕՆԴՕՆ։ Մարտի 20-ին Րօբերտս հեռագրում է Բլումֆօնտէնից։ «Թէեւ իմ վերջին հեռագիրն ուղարկելուց յետոյ նոր ընդհարումն չէ պատահել, բայց եւ այնպէս մեր զօրքերը կանգնած են թշնամու դէմ յանդիման։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Ապրանքակիր «Չիկագօ» նաւը ճանապարհ է ընկնում դէպի Բէյրա։ Նրա վրա գտնվում են աւստրալիական կորպուսի մի մասը, ձիեր, ջորիներ եւ Րոդէզիայի երկաթուղու համար կարեւոր նիւթեղէններ։ Բէյրա է ուղարկվում նմանապէս շատ ռազմամթերք եւ պաշարեղէն։

ՀԱԱԳԱ։ Պատգամաւորների ժողով։ Մի քանի պատգամաւորներ հակառակվում են Վեգենի առաջարկութեանը յետաձգելու այն օրինագիծը, որով հաստատվում է միջազգային միջնորդ դատարանի կօնվենցիան։ «Կօնվենցիան, ասում են նրանք, վնասակար է հարաւ-աֆրիկական հանրապետութիւններին եւ առհասարակ չէ կարող ոչ մի օգուտ բերել»։ Պատգամաւոր Վիգէն պնդում է, թէ նրա առաջարկութեան նպատակն էր միայն ստիպել կառավարութեանը բացատրութիւններ տալու այն բանակցութիւնների վերաբերմամբ, որոնք տեղի են ունեցել խաղաղութեան կօնֆերենցիայից առաջ։ Արտաքին գործերի մինիստր Բօֆօր յայտնում է, թէ պետական շահերը թոյլ չեն տալիս այժմ բացատրութիւններ տալ նոյն իսկ յանձնաժողովի մէջ։ Այնուհետեւ յետաձգման առաջարկը յետ առնվեց։ Կօնվենցիայի քննադատութիւնը շարունակվեց։

22 մարտի

ՊԱՐԻԶ։ Ժօզէֆ Բերտրան, ֆրանսիական ակադեմիայի անդամ եւ անփոփոխ քարտուղարը վախճանվեց։

ԿԱՊՇՏԱԴ։ Լէդի Րօբերտս հասաւ Կապշտադ։

ՊԱՐԻԶ։ Սենատում քննադատվում է արտաքին գործերի մինիստրութեան բիւջէտը։ Դոնէ յիշեցնում է Անգլիայի վարմունքը Շանգհայի կոնցեսսիաների եւ Ֆաշօդի գործերում եւ եգիպտական հարցում։ Ճառախօսը աւելացնում է, թէ տրանսվաալեան պատերազմից սկսած՝ Անգլիան, ըստ երեւոյթին, աւելի խաղաղասէր տրամադրութիւն է ցոյց տալիս եւ դրանից հարկաւոր էր օգուտ քաղել՝ սկսելու համար այնպիսի բանակցութիւններ, որոնք մօտեցնէին երկու ազգութիւնները։ Դելկասսէ պատասխանում է, թէ նա չէ կամենում առայժմ խօսել Անգլիայի սպառնալիքների մասին։ Դեռ եւս ժամանակ չէ խօսելու 1898 թւականին տեղի ունեցած անցքերի մասին, բայց եւ այնպէս ոչ կառավարութիւնը եւ ոչ Ֆրանսիան տեղիք չունեն երկիւղ կրելու նրանց հրապարակ հանելուց։ 1890 թւականին կապած դաշնադրութիւնը Ֆրանսիային նշանաւոր օգուտներ կը հասցնէ։ Ապա Դելկասսէն յիշեցնում է Միացեալ Նահանգների հետ կապած առեւտրական դաշնադրութեան եւ այն բանակցութիւնների մասին, որոնք վերաբերում են չինական կոնցեսսիաներին։ Այն հետեւանքները, որոնց հասել է կառավարութիւնն այդ գործում, Դելկասսէ անուանում է հիանալի։ Ֆրանսիան նորից դարձաւ գաղթականական պետութիւն եւ պարտաւոր է հոգ տանել զարգացնելու նոր գաղթականութիւնների հարստութիւնները։ Անհրաժեշտ է զարգացնել Ֆրանսիայի տնտեսական կազմակերպութիւնը եւ նաւատորմին տալ հարկաւոր ոյժը։

ԼՕՆԴՕՆ։ Բրիտանական զօրքը Բլումֆօնտէնի ջրանցքի մօտ տեղի ունեցած պատերազմում կորցրեց 3 սպանված, 3 անյայտ կորած եւ 14 վիրաւորված օֆիցերներ։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ «New-York-Herald»-ին հաղորդում են Բլումֆօնտէնից, թէ կապիտան Րէյխման, որ Կօրնսպրուտի մօտ թակարդի մէջ ձգեց անգլիացիներին, Կարլ Րէյխմանն է, Միացեալ-Նահանգների զօրքի օֆիցէրը, որ գտնվում է բօէրների բանակում, որպէս զինուորական գործակալ։ Նոյն լրագրին հաղորդում են Վաշինգտօնից, թէ այնտեղի զինուորական մինիստրութեան մէջ այդ տեղեկութիւնը անհաւանական են համարում, թէպէտեւ վերջին ժամանակ Րէյխմանից մինիստրութեան մէջ տեղեկութիւններ չեն ստացված։

ՀԱԱԳԱ։ Պատգամաւորների ժողով։ Վան-Կարնբեեկ, Հօլլանդիայի առաջին լիազօրը խաղաղութեան կօնֆերենցիայում, յայտնում է, թէ ոչ մէկն այն պետութիւններից, որոնք ստորագրեցին կօնվեցիան, չէր կարծում, թէ այդ ստորագրութիւնը Անգլիայի գերիշխանութիւնը ճանաչելու նշանակութիւն կունենայ Տրանսվաալի վրա։ Արտաքին գործերի մինիստրը եռանդով պաշտպանում է միջազգային միջնորդ դատարանի կօնվեցիան, որպէս մի քայլ, որ տանում է դէպի ընդհանուր առաջադիմութիւն։ Այնուհետեւ կօնվեցիան ընդունվեց 65 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 26-ի։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողով։ Շապիւի պահանջում է, որ ցուցահանդէսի բացումը յետաձգվի, որովհետեւ աշխատանքները դեռ եւս չեն վերջացած։ Միլերան պատասխանում է, թէ երբէք ոչ մի ցուցահանդէս աւելի պատրաստ չէ եղել եւ թէ բացումը տեղի կունենայ նշանակված օրը։ Շապիւիի առաջարկութիւնը մերժվեց 357 ձայների առաւելութեամբ ընդդէմ 58-ի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

	№ 1 գնացքը։	№ 3 գնացքը։
Բագուից դուրս է գալիս	ցեր. 4 ժ. 15 ր.	գիշ. 12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 » 40 »	եր. 6 » 28 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 10 »	եր. 7 » 32 »
Բաթում է հասնում	եր. 8 » 32 »	առ. 8 » 12 »

	№ 2 գնացքը։	№ 4 գնացքը։
Բաթումից դուրս է գալիս	առ. 9 ժ. 15 ր.	եր. 9 ժ. 05 ր.
Թիֆլիս է հասնում	եր. 8 » 53 »	առ. 9 » 45 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 25 »	» 11 » 32 »
Բագու է հասնում	ցեր. 1 » 04 «	» 6 » 15 »

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հինգ հոգու համար։

Թիֆլիսից դուրս է գալիս 7 ժ. առ.	9 ժամ առ.
Գիշերում է Մլետում	Պասանաուր
Վլադիկավկազ հասնում է 7 ժ. 20 ր. եր.	9 ժ. 20 ր. եր.
Վեց հոգու համար (չեն գիշերում)	
Թիֆլիսից դուրս է գալիս 1 ժ. ցերեկ.	7 ժամ երեկ.
Վլադիկավկազ հասնում է 3 » 25 ր. եր.	9 ժ. 50 ր. եր.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Ն. Մ. Ջիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Ն. Ցպակօվսկի—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ն. Ցպակօվսկի—6—7 ժ. Նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. Նաւասարդեան—$7\frac{1}{2}$—8 ժ.

Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժըշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
108—150 **Բժիշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ**

Կովկասեան ուսումնական շրջանի պ. հոգաբարձուի թոյլտուութեամբ՝

Յ. Ի. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԲԱԳՒՈՒՄ

այս տարվայ սեպտեմբեր ամսից վերածվում է II կարգի արական ուսումնարանի պրոգիմնազիական 4 դասարանեան դասընթացով։

2—3

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՆՈՐԴ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵՍԱԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պասաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ։

Հրաւիրում է պ.պ. տանտէրերին հաղորդել մանրամասն հասցէ ազատ բնակարանների (դրա համար վերցնվում է 20 կոպ.), որ շատ դիւրութիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ բնակարան վարձողներին։ Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ։ Գրասենեակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ։ Ցանկացողները թող դիմեն գրասենեակ։

№ 1. 0—19

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտւութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագւում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Գապօվի և Արիստակօվի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։

51—100

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ

ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ

Հասցէն՝ Красногорская ул. № 14. 17—21

ԹԻՖԼԻՍԻ ԿՐՈՒԺՕԿ

Կիրակի, մարտի 26-ին

Վ. Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉ

կը կարդայ

իր վերջին հրապարակական դասախօսութիւնը աշակերտների համար

ՋՐԻԱԿԵՐ ԵՒ ՀԱՅԱՓՈՐ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն պատկերներ մոգական լապտերով։

Սկիզբը ցերեկվայ ժամի 12-ին։

Տոմսակները (50, 30 և 20 կոպ.) Մեսանիկօվի մագազինում, Դվօրցօվայա փողոց, Խիդդեկէլի գրավաճառանոցում եւ պաւիլիօնում, Գօլօվինսկի պրօսպէկտ, իսկ դասախօսութեան օրը՝ Կրուժօկի շինութեան մէջ։

1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, մարտի 28-ին

Պ.պ. անդամների, կանդիդատների եւ նրանց ընտանիքների համար ռուսաց դրամատիքական խմբի դերասանները կը ներկայացնեն ռուսաց լեզուով Նեվեժինի կոմէդիաներից տեսարաններ

„НА ЗЫБКОЙ ПОЧВѢ“

ԵՒ

„ШКОЛЬНАЯ ПАРА“ վօդեվիլը։

Տեղերի գինը 20 կոպէկից—1 րուբլի։

Սկիզբը $8\frac{1}{2}$ ժամին։ 1—3

ПАРИЖСКАЯ ГАЗЕТА

Русское ежедневное политическое и литературное изданіе съ иллюстраціями въ текстѣ.

I Оффиціальный отдѣлъ: Дѣйствія и распоряженія русскаго правительства.—II Циркуляры и распоряженія по всемірной выставкѣ и по русскому отдѣлу.—III. Ежедневныя телеграммы и корреспонденціи изъ крупнѣйшихъ центровъ Европы и изъ главнѣйшихъ городовъ Россіи отъ собственныхъ корреспондентовъ.—IV. Политическое обозрѣніе.—V. Обзоры русской и иностранной печати.—VI. Хроника русской столичной и провинціальной жизни.—VII. Хроника иностранной жизни.—VIII. Судебный отдѣлъ.—XI. Театръ и музыка.—X. Фельетонъ: научное обозрѣніе, беллетристика.—XI. Всемірная выставка: описанія руссаго и иностранныхъ отдѣловъ.—XII. Спортъ.—XIII. Биржевой бюллетень.—XIV. Библіографія.—XV. Справочныя свѣденія.—XVI. Объявленія.

Отдѣльные номера въ Парижѣ по 15 сантимовъ.

Подниска принимается съ 1-го и 15-го каждаго мѣсяца.

ЦѢНА СЪ ДОСТАВКОЙ И ПЕРЕСЫЛКОЙ

	1 мѣсяцъ	3 мѣс.	6 мѣс.	1 годъ
Во всѣ города Россіи	**3** р,	**8** р.	**15** р.	**28** р.
Въ остальные города почтоваго союза	**7** франк.	**17** фр.	**35** фр.	**70** фр.
Въ Парижѣ и въ Д-тѣ Сены и Уазы	**5** „	**13** „	**25** „	**50** „
Въ остальной Франціи	**6** „	**15** „	**30** „	**60** „

Объявленія (для Россіи) { На 1-ой стр. по **5** франковъ (**2** р.) за строку петита
На 4-ой стр. по **1** фр. **50** сант. (**60** к) „ „

Подписки и объявленія принимаются: въ **главной конторѣ Парижской Газеты,** Парижъ 18, Бульваръ Монмартръ

(*Administration de la PARIJSKAYA GAZETA*, Paris, *18, boulevard Montmartre*);

въ отдѣленіи конторы на всемірной выставкѣ; въ главнѣйшихъ книжныхъ магазинахъ заграницы и Россіи; въ книжныхъ магазинахъ Т-ва Вольфа, Мелье, въ Петербургѣ и Новаго Времени, въ Петербургѣ, Москвѣ, Харковѣ и Одессѣ; въ Москвѣ, въ конторѣ Ф. Зголинскаго (отдѣленіе конторы Русскаго Листка), Петровка д. Грачева; въ Москвѣ и Петербургѣ; въ конторѣ торговаго дома Л. и Э. Метцль и К° и въ Агентствѣ Парижской Прессы Віолэ; въ Одессѣ: въ книжныхъ магазинахъ Руссо, Москетти, Распопова, Штадельмайера и въ газетномъ кіоскѣ Свистунова; въ Кіевѣ: въ книжномъ магазинѣ Идзиковскаго; въ Харковѣ: въ книжномъ магазинѣ „Южнаго Края“.

Отдѣльные номера продаются въ кіоскахъ и на станціяхъ желѣзныхъ дорогъ. 2—5

СЕКРЕТЪ КРАСОТЫ

ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ

А. СІУ и К° МОСКВА. **20 коп. кус.**

M. 109486



ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Ինժեներ Ն. Բ. Պասսէկի

Тифлисъ, Михайловская ул. № 116.

Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.

ՏԵԼԵՖՕՆ № 642.

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ

Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ

կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ

ԳԱԶԱ-ՇՈԳԻՒ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆօնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ

ամեն տեսակ

տուրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ

երկաթէ կամուրջներ և տնակներ։

ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(և. հ. չ.) 79—100

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 29 մարտի (11 ապրիլի) ԺՕՐԺԻ շոգենաւը, նաւապետ ԲՈՒԼ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկօվի, № 27։ ՆՕՎՕՐՕՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (և. հ. չ.) 20—20

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Марта 1900 г.
Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.